ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2025 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված **N ԵՄ-ՀՄԱԱՊՁԲ-25/170-1** գնման պայմանագրի

ք. Երևան «21» 01 2026թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ալեռտո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Բաղդասարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2025 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N ԵՄ-ՀՄԱԱՊՁԲ-25/170-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1 և 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Կառավարության 18 դեկտեմբերի 2025թ. N 1841-Ն որոշման հիման վրա ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի, «Ալեռտո» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև N 1 համաձայնագիրը կնքվել է 2025 թվականի դեկտեմբերի 26-ին, սակայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ապրանքի» «Մատակարարման» «Ժամկետը***» սահմանված է «...ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատակարարումն իրականացվելու է մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը», ինչի արդյունքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի «ը» ենթակետով սահմանված պահանջները, հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ապրանքի» «Մատակարարման» «Ժամկետը***» սյունակը խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «...ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատակարարումն իրականացվելու է 20 օրացուցային օրվա ընթացքում»:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | «Ալեռտո» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 | ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1570083324940100 | Հ/Հ 1660008914310100 |
| ՀՎՀՀ 00000911 | ՀՎՀՀ 02686862 |
| Գլխավոր տնօրենի ժ/պ ____________ Բ. Սեդրակյան | Տնօրեն ____________ Ս. Բաղդասարյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |